ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 30.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/61

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.10.2017թ. թիվ 03/26-3/19511-17 գրությամբ «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00450303) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ նախագահի աշխատակազմի 19.10.2017թ. թիվ ՆԱԳԿ2552 գրության հիման վրա, 22.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ նախագահի աշխատակազմի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ նախագահի աշխատակազմը 19.10.2017թ. թիվ ՆԱԳԿ2552 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-17/14 ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղն զբաղցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: Համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության՝ «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ն չի բավարարել հրավերի 2.1 կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ «ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ», ինչի հետևանքով հայտը մերժվել է, և մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվություն չն ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը»:

Պատվիրատուն պատշաճ կերպով ծանուցվել է Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի ներկայությունը նիստերին:

3. <u>«Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Խորհուրդը դիմել է «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.10.2017թ. թիվ 03/26-3/19511-17 գրությամբ

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչ Հայկ Սեմերջյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/61 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.10.2017թ. թիվ 03/26-3/19511-17 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ Նախագահի աշխատակազմի 19.10.2017թ. թիվ ՆԱԳԿ2552 գրությունը, «ՀՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը, «ՀՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 19.09.2017թ. նիստի թիվ 2, 25.09.2017թ. նիստի թիվ 3, 29.09.2017թ. նիստի թիվ 4 և 04.10.2017թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ՝ նաև Կոմիտե) 25.09.2017թ. կատարված հարցումը և Կոմիտեի կողմից 26.09.2017թ. ներկայացված եզրակացությունը, Կոմիտեի կողմից «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկանքը, Պատվիրատուի կարծիքը և դիրքորոշումը.

ՀՀ Նախագահի աշխատակազմի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ն՝ 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին

հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 25.09.2017թ. նիստի N 3 արձանագրության 2.1 կետով որոշել է ընթացակարգի 8-րդ չափաբաժնով «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 2.3 կետով Հանձնաժողովը որոշել է էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացնել հարցում՝ ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովը 25.09.2017թ. Կոմիտեին ուղարկել է հարցում՝ խնդրելով տարամադրել «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ի՝ 16.09.2017թ. դրությամբ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ տեղեկատվություն:

Կոմիտեի կողմից 26.09.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 41,793 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

«ՀՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 79,250 ՀՀ դրամ (8-րդ չափաբաժնի համար):

Հանձնաժողովը 29.09.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավրություն 41,793 ՀՀ դրամի չափով, ինչը գերազանցում է մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Նույն արձանագրության 2.1 կետով Հանձնաժողովը որոշել է «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը:

Կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ Նախագահի աշխատակազմի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-17/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 8.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

• 8.16 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն հրավերի 8.15-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն

լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Խորհրդին հայտնեց, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ գերավճար, որից կատարվել է հաշվանցում Ընկերության՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ճշտության ստուգման արդյունքներով կազմված ակտով պարտավորությունների մարմանն ուղղված վճարման գծով, ինչի արդյունքում, Ընկերության համար անհասկանալի պատճառներով, 41.793 ՀՀ դրամի չափով գումարը արտացոլվել է որպես ժամկետանց հարկային պարտավորություն:

Խորհուրդը N ՍՑ-ԷՍ-2017/61 ծածկագրով պաշտոնական ընթացակարգի քննության շրջանակներում 10.11.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ/1/20526-17 գրությամբ հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն, արդյո՞ք նշված գումարը հանդիսանում է տվյալ օրվա դրությամբ Ընկերության կողմից ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած ժամկետանց հարկային պարտավորություն, թե՝ ոչ:

Ի պատասխան Խորհրդի վերը նշված հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 23.11.2017թ. թիվ 03/70-20/49057-17 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ն 16.09.2017թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն չունի:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն չի ունեցել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային

առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ,

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.10.2017թ. «Էքստերիեր գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**